Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի

անվան թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ « Ուսուցման շերտավորման առանձնահատկությունները. անհատական աշխատանք օժտված երեխաների հետ, աշխատանքի ձևերն ու մեթոդները»

Ուսուցիչ՝ Քրիստինե Կիրակոսյան

Դպրոց՝ Գլաձորի միջնակարգ

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2022

Ներածություն

Այն փաստը, որ տարբեր տարիքում մարդկանց հատուկ են ընկալման, մտապահման, հաղորդակցման , ստեղծագործական և այլ կարողություններ, որ դրանք տարբեր մարդկանց մոտ արտահայտվում են տարբեր կերպ, հայտնի էր մարդկությանը դեռ վաղուց: Սակայն այսօր գիտականորեն հիմնավորված է, որ մարդկանց միջև եղած տարբերությունները հիմնականում պայմանավորված են նրանց տարիքային առանձնահատկություններով, այսինքն՝ ամեն տարիք ունի իր յուրահատկությունները, ըստ որոնց էլ այսօր գիտության մեջ կատարվում է տարիքային պարբերացումը: Մանկավարժական փորձը հաստատում է, որ անձի դաստիարակությունն ու զարգացումը նպատակային ու արդյունավետ են, երբ հաշվի են առնվում սովորողների տարիքային, անհատական առանձնահատկությունները: Հակառակ դեպքում և՛ կրթությունը, և՛ դաստիարակությունը արժեք չեն ունենա, ինչպես նաև ծագած հակասությունները համապատասխան լուծումներ չեն ստանա: Հայտնի է, որ յուրաքանչյուր տարիք ունի իր առանձնահատկություններն ու դժվարությունները, քանզի յուրաքանչյուր սերունդ իր վրա է կրում տվյալ ժամանակաշրջանի կնիքը: Ինչպես նկատում է Անտուան դը Սենտ Էքզյուպերին, <<Մարդն իր ժամանակի մանուկն է, յուրաքանչյուր սերնդի հատուկ են իր ապրելակերպի ու մտածելակերպի առանձնահատկությունները>>: Ուսումնադաստիարակչական աշխատանքներին վերաբերող ոչ մի հարց չի կարող հաջողությամբ լուծվել, եթե չուսումնասիրվեն ու հաշվի չառնվեն սովորողների տարիքային ու անհատական, հոգեբանական ու բնախոսական առանձնահատկությունները: Այդ առումով մանկավարժական հոգեբանության ընձեռած հնարավորությունները ևս զգալի են և հիմք են ծառայում տարիքային առանձնահատկությունների հաշվառման համար, դառնում ուսուցման ու դաստիարակության սկզբունքներից մեկը: Դրանք էլ հուշում են մանկավարժական այնպիսի մեթոդների , ձևերի,եղանակների ու միջոցների կիրառում, որոնք պահանջում է տվյալ տարիքը և անհատականությունը: Տարիք հասկացությունը օգտագործվում է մարդու անհատական զարգացման ժամանակային բնութագիրը տալու համար: Կյանքը և մարդու գոյատևման փորձը ցույց են տալիս, որ կարևորը ոչ թե ծննդյան վկայականն ու անձնագրային տարիքն են,այլ կենսաբանական,բնախոսական, հոգեբանական զարգացման մակարդակը, ինչպես նաև՝ առաջատար գործունեության մեջ անհատի հասարակական ակտիվությունը:

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

Ժամանակակից մանկավարժությունը պնդում է, որ ուսուցման և դաստիարակության ընթացքում պետք է հաշվի առնվեն անհատական առանձնահատկությունները, առավել ևս կրտսեր դպրոցում: Ճանաչելով երեխայի կյանքի պայմանները և անհատական գծերը՝ կարելի է կառավարել նրա զարգացումը: Անհատական մոտեցումը ստեղծում է արդյունավետ հնարավորություններ, պայմաններ, իմացական ուժերի ակտիվություն հակումների և տաղանդի զարգացման համար: Անհատական մոտեցում են պահանջում առավելապես <<բարդ>> կամ <<դժվար>> երեխաները, քիչ ընդունակությունների տեր աշակերտները,օժտված երեխաները, ինչպես նաև զարգացման խախտումներ ունեցող երեխաները (ԿԱՊԿՈՒ): Ժամանակակից կամ նորարարական մանկավարժությունն ուղղված է աշակերտների ներքին հնարավորությունների բացահայտմանն ու զարգացմանը, իսկ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները նպաստում են դրան: Մանկավարժը չպետք է մոռանա, որ յուրաքանչյուր երեխա ՝ անկախ տարիքից, անհատականություն է, և ինքը պարտավոր է ուղղորդել նրա ուսումնառությունը՝ ըստ վերջինիս ուժերի: Չպետք է բացառել այն հանգամանքը, որ ուսուցման պրոցեսում կրտսեր դպրոցում ևս կան <<դժվար>> երեխաներ,որոնց անձի կառուցվածքը ուղղումների կարիք է զգում: Դրանց շարքին են դասվում նաև անհնազանդ, կամակոր, և քմահաճ երեխաները, որոնք հատուկ անհատական մոտեցման կարիք ունեն:Բնավորության այդ գծերի զարգացումը կանխելու և հաղթահարելու հիմնական ուղին նման շեղումների իրական պատճառները բացահայտելը, երեխայի պահանջմունքների ու հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն հանդես բերելն է, որը պետք է զուգորդվի պահանջկոտության հետ: Նման երեխաներին մեծապես օգնում է համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը, երբ նրանք ընդգրկվում են խմբային աշխատանքներում: Երեխաների զգալի մասի մոտ կարելի է նկատել չարաճճիություն, անկարգապահություն և կոպտություն: Այսպիսի երեխաների հետ տարվող աշխատանքը ենթադրում է նրանց ակտիվության նպատակասլաց կազմակերպում, հարգանք նրանց արժանիքների և ինքնուրույն լինելու իրավունքի նկատմամբ: Որոշակի խումբ են կազմում այն երեխաները, որոնց վարքագծի համար բնորոշը աշխատելու ցանկության ու սովորության բացակայությունն է, այսինքն՝ ծուլությունը: Մանկավարժը պետք է նկատի և խրախուսի այդպիսի երեխայի ձգտումներն ու ջանքերը,նրանում պետք է աշխատելու ցանկություն արթնացնի ու սովորեցնի զգալ , թե հաճույքի և ուրախության ինչպիսի անսպառ աղբյուր կարող է դառնալ գործունեությունը: Առանձնացնում են նաև այնպիսի երեխաների, որոնք ունեն ուշադրության շեղումներ, դժվարությամբ են կենտրոնանում և ընկալում ուսուցանվող

նյութը: Նման երեխաներին ուսուցիչը պարտավոր է անընդհատ ուշադրության կենտրոնում պահել, զբաղեցնել կենտրոնացնող առաջադրանքներով: Կան այնպիսի երեխաներ, որոնց ամենաբնորոշ բացասական գիծը ստախոսությունն է: Այդ թերության դեմ արդյունավետ պայքար մղելու համար պետք է իմանալ, որ այն երկու ձևով է հանդես գալիս. հորինումը կամ երևակայական ֆանտազիաների ստեղծումը, որը առավել բնորոշ է կրտսեր դպրոցականներին, և ճշմարտության գիտակցված խեղաթյուրումը: Ստախոսության դեպքերի հետ առնչվելիս մանկավարժը մանրակրկիտ ու քրտնաջան աշխատանք պետք է կատարի, որի նպատակներն են երեխաների ստախոսության իսկական պատճառների բացահայտումը, ճշմարտախոսության , վստահության , փոխադարձ հարգանքի ու պահանջկոտության մթնոլորտի ստեղծումը,կեղծիքի խորապես անհրապույր ու պարսավելի լինելն ու վախկոտության ցույց տալը: <<Դժվար>> երեխաների հետ տարվող աշխատանքում անհրաժեշտ է հատկապես նուրբ անհատական մոտեցում հանդես բերել , որի համար պահանջվում է ուշադիր և բարյացակամ վերաբերմունք ցույց տալ երեխայի նկատմամբ, հենվել նրա դրական որակների վրա, ընդգծված վստահություն հանդես բերել նրա բարոյական ուժերի և պոտենցիալ հնարավորությունների նկատմամբ: Մանկավարժը պետք է հատուկ մոտեցում ցուցաբերի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ, որպեսզի նրանք իրենց զգան դպրոցական կոլեկտիվի լիարժեք անդամ:

Դպրոցականների անհատական առանձնահատկություններն ուսումնասիրելիս մանկավարժներն օգտվում են մոտավոր ծրագրով, որն առաջին հերթին նախատեսում է երեխայի կենսագրության, նրա անհատական զարգացման պարզաբանումը:Այստեղ կարևոր է տվյալներ ստանալ դրական և բացասական այն ազդեցությունների մասին, որոնց ենթարկվում է աշակերտը: Կարևոր է իմանալ առողջության վիճակը վաղ մանկության շրջանում և երեխայի տարած հիվանդությունները, դրանց հետևանքները: Նշանակություն ունի, թե ինչպիսին է եղել ընտանիքի կազմը երեխայի ծնվելու պահին և այնուհետև ինչ փոփոխություններ են տեղի ունեցել: Կարևոր է իմանալ, թե ինչպիսի հաջողություններ են եղել ուսման մեջ դպրոցական առաջին տարիներին և ինչպիսին է այդ հաջողությունների դինամիկան հետագայում: Աշակերտների անհատական առանձնահատկությունները բացահայտելիս մեծ նշանակություն է տրվում բավականաչափ քանակությամբ հավաստի փաստերի կուտակմանը, որոնց հավաքման համար հանձնարարվում է օգտագործել աշակերտների հետազոտումը տարբեր իրադրություններում, զրույցներ աշակերտի, նրա ընկերների, ծնողների և ուսուցիչների հետ, դպրոցականի գործունեության արդյունքների ուսումնասիրումը (տետրեր, շարադրություններ, նկարներ, մոդելներ, ասեղնագործ աշխատանքներ և այլն): Խիստ անհրաժեշտ է կազմել հետազոտման պլան կամ գործունեության արդյունքների ուսումնասիրման և զրույցի պլան: Սա հնարավորություն կտա

ստանալու հենց այն տեղեկությունները, որոնք կարևոր են աշակերտի այս կամ այն առանձնահատկությունը բնութագրելու համար:

Օրինակ՝ աշակերտների հետաքրքրությունների և հակումների ուսումնասիրումը նախատեսում է պարզել , թե աշակերտը ո՛ր դասերին է ավելի մեծ հաճույքով աշխատում և ակտիվորեն մասնակցում, ո՛ր առարկայից է նա ցուցաբերում գիտելիքներ, օգտվելով լրացուցիչ աղբյուրներից, ի՛նչ նախասիրություններ ունի:

Օբյեկտիվ տեղեկություններ ստանալու համար կարևոր է աշակերտին տրամադրել անկեղծության և բարյացակամ իրադրությունը պահպանել ամբողջ զրույցի ընթացքում: Զրույցի ժամանակ հաղորդված տվյալների օբյեկտիվությունը շատ բանով կախված է ուսուցչի տակտից, նրան հետաքրքրող հանգամանքները պարզելու հմտությունից, ընդ որում ոչ միայն ուղղակի հարցերի ձևով, այլև կողմնակի ճանապարհով: Քանի որ զրույցն անցկացնելիս հարկ է լինում եզրակացություններն անել իրեն՝ աշակերտի պատասխանի հիման վրա, օգտակար կլինի այն զուգակցել դպրոցականի գործունեության արդյունքների զննման և ուսումնասիրման հետ: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում դպրոցականների ստեղծագործական աշխատանքները՝ շարադրությունները, նկարները,մոդելները և այլն: Դրանք հնարավորություն են տալիս հավաքել տվյալներ, որոնք վկայում են այս կամ այն աշակերտի ընդունակությունների, հետաքրքրությունների, բնավորության գծերի և այլ առանձնահատկությունների մասին:

https://old-lib.armedu.am/resource/16640

ՇԵՐՏԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից կրթությունը նպատակաուղղված է այդ համակարգում կենտրոնական տեղ զբաղեցնող անձի ճանաչողական կարողությունների և ինքնուրույնության զարգացմանը: Այդ պահանջը ենթադրում է այնպիսի կրթական գործընթացի կազմակերպում, որի ժամանակ հաշվի է առնվում յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները:Այս պարագայում աշակերտը հնարավորություն է ունենում իրեն լիարժեք դրսևորելու, ուսման նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու:

Դասի ժամանակ, հատկապես ուսումնական գործունեության համընդհանուր /ֆրոնտալ/ ձևի կիրառման պայմաններում, ուսուցիչը դժվարանում է վերոնշյալ խմբերն առանձնացնել՝ հաշվի առնելով առանձին աշակերտների միջև առկա տարբերությունները: Իսկ դրանք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝ նախնական գիտելիքների տարբերությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչպիսի ընտանիքից է տվյալ երեխան/ նրա մտավոր կարողությունները, բառապաշարը, արժեքային համակարգը/:

Ճանաչողական կարողությունների տարբերությունները՝
- **ընկալումը**
- **կենտրոնացած ուշադրության տևողությունը**
- **հիշողությունը:**

մտածողությունն ու լեզուն՝
- **լեզվական-խոսակցական**
- **տրամաբանական-մաթեմատիկական**
- **տեսողական**
- **շարժողական**
- **երաժշտական**
- **միջանձնային**
- **ներանձնային**

Տարբեր բնավորության աշակերտներ ունեն տարբեր՝
- **սովորելու ոճ**
- **մղում /դրդապատճառ/**
- **վերաբերմունք**
- **հետաքրքրություններ**
- **ուղեղի կիսագնդերի գերակայություն /դոմինանտություն/**
- **սեռ**
- **էթնիկական ծագում և այլն**

Վերոնշյալ տարբերություններն անխուսափելի են դարձնում ուսումնական գործընթացում ուսուցչի որդեգրած մոտեցումների մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Ուստի մերօրյա մանկավարժը պետք է նոր մոտեցումներ ու եղանակներ կիրառի՝ փորձելով գտնել հետևյալ հարցերի պատասխանները՝

- ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ դասավանդել,
- ինչպե՞ս կարող եմ օգտակար լինել իմ աշակերտին.
- ինչպե՞ս կարող եմ իմ աշակերտների վերաբերմունքը դասի ու դպրոցի նկատմամբ ավելի դրական /պոզիտիվ/ դարձնել:

Ուսումնական գործընթացում այս և նմանօրինակ խնդիրների լուծման համար արդյունավետ է կիրառել շերտավորված ուսուցում, որի դերն այսօր կարևորվում է ժամանակակից դասին ներկայացվող պահանջների համակարգում՝ մեծապես նպաստելով դիդակտիկական գործընթացի արդյունավետ կառավարմանը: Շերտավորված ուսուցումն ուսումնադաստիարակչական ճկուն գործընթաց է, որը բնութագրվում է սովորողների անհատական ընդունակությունների հաշվառմամբ:Այդ գործընթացի իրականացման ժամանակ ուսուցիչը ոչ թե աշակերտին է հարմարեցնում ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը մշակում, դարձնում է դյուրահաս ու մատչելի յուրաքանչյուր աշակերտի համար: Նմանօրինակ մոտեցումը նպաստում է նաև դասարանի համընդհանուր ակտիվացմանը. յուրաքանչյուր աշակերտ իր անելիքն է ունենում:Երբ ուսումնական գործընթացում ուսուցիչն ամբողջ դասարանի առջև դնում է միևնույն առաջադրանքի կատարման պահանջ՝ հաշվի չառնելով աշակերտների անհատական-հոգեբանական կարիքները, ապա նա չի ապահովում որակյալ կրթություն, այն է՝ օգնել յուրաքանչյուր աշակերտի առաջ շարժվել ըստ իր ընդունակությունների և կարողության:Հետևաբար, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր աշակերտ ուսումնական գործընթացում զբաղված լինի իր ընդունակություններին համապատասխան աշխատանքով, նույն դասարանի տարբեր աշակերտների համար ուսումնական ծրագրի միևնույն պահանջի համար նախատեսվեն տարբեր աշխատանքներ: Այս դեպքում, կարծում ենք, աշակերտը կդառնա ավելի ինքնավստահ, կվայելի ուսման նկատմամբ բերկրանք ու զարգացում կապրի:

Շերտավորված ուսուցումն ունի և՛ իր դրական, և՛ բացասական կողմերը:: Դրականներից են՝
¬ ուժեղ սովորողները հնարավորություն են ունենում իրենց զարգացման մեջ առաջընթաց ապրել.
¬ ուժեղ սովորողները ավելի ինքնուրույն են դառնում.
¬ ուժեղ աշակերտներն ավելի մոտիվացվում են ուսման նկատմամբ.
¬ հնարավորություն է ստեղծվում ուշադրություն դարձնել հետ մնացողներին և ստուգել նրանց.
¬ բարձրանում է թույլ աշակերտի ինքնագնահատականը.

Բացասական կողմերից են՝
¬ թույլերը հնարավորություն չեն ունենում հասնել ուժեղներին.
¬ թույլ խմբերում նվազում է ուսման շարժառիթը /մոտիվացիան/:

Շերտավորված ուսուցման ժամանակ կարևորվում է հետադարձ կապը: Հայտորոշիչ ստուգում անցկացնելուց հետո կատարվում է աշխատանքների վերլուծություն (սխալների ու բացթողումների վերհանում, դժվարությունների արձանագրում): Արդյունքում որոշակիացվում է յուրաքանչյուր սովորողի զարգացման աճը, որին համապատասխան էլ փոխվում է խմբերի կազմը և շերտավորված առաջադրանքների

բնույթը:Քանի որ առաջադրանքները հարմարեցված են սովորողների անհատական կարիքներին, ուստի այն վերածվում է յուրօրինակ ինքնուրույն աշխատանքի՝ հնարավորություն ստեղծելով առանձին աշակերտների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում:

Շերտավորման նպատակով դասդասված առաջադրանքները ներկայացվում են տարբերակներով՝
I տարբերակ – հիմնական առաջադրանք
II տարբերակ – առաջադրանք ավելի մեծ ծավալով
III տարբերակ–ստեղծագործական առաջադրանք
Այս առաջադրանքները անմիջականորեն պայմանավորված են ընկալման երեք մակարդակներով :

Ըստ դպրոցականի ուսումնառության չափորոշիչների՝

3-րդ մակարդակում այն երեխաներն են, ովքեր առանց դժվարության ընկալում են ուսումնասիրվող նյութը, առանձնացնում են գլխավորը, էականը, օրինաչափը, մասնավորում տեսնում են ընդհանուրը, ինքնուրույնաբար կարողանում են բացահայտումներ կատարել, ստացած գիտելիքները գործադրել նոր իրավիճակներում, կարճ ժամանակում հասնել գիտելիքների բարձր մակարդակի:

2-րդ մակարդակում նյութը յուրացնում են մարզողական աշխատանքներից հետո, էականը, օրինաչափը անմիջապես չեն կարող առանձնացնել, որոշակի վարժողական աշխատանքից հետո նոր տեսնում են մասնավորի մեջ ընդհանուրը: Գիտելիքների յուրացման համար ավելի շատ ժամանակ է պահանջվում:

1-ին մակարդակում նյութը յուրացնում են բազմակի վարժություններ կատարելուց հետո, դժվարանում են էականի առանձնացման մեջ, անգամ ամբողջ դասարանի հետ ընդհանուր վարժողական աշխատանք կատարելուց հետո,հիմնականում կատարում են վերարտադրողական առաջադրանքներ, գիտելիքները յուրացնում են շատ երկար ժամանակահատվածի մեջ:

Նոր մոտեցումներ մայրենիի ուսուցման դասընթացում և ուսուցման շերտավորումը

Բոլորիս հայտնի է, որ տարրական դասարաններում գործադրվում է մայրենիի ուսուցման միացյալ մեթոդը, այսինքն՝ ընթերցանության և դրա հիման վրա ուսուցանվող լեզվական գիտելիքների համադրմամբ: Լեզվական գիտելիքները մատուցվում են ոչ որպես քերականական նյութ (կանոներով, սահմանումներով), այլ գործնական ճանապարհով՝ գեղարվեստական ստեղծագործության համատեքստում ապահովելով կիրառական արժեքը (գործնականում):

Աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար պետք է հստակ նշել, օգտագործել նոր տեխնոլոգիաներ, դրական դրդապատճառներ (մոտիվացիա-ձգտում) ստեղծելու հնարավորություններ, ստեղծել մտածողության զարգացման ձևեր: Սակայն հաճախ ուսուցիչները նախընտրում են մեթոդների, հնարների բազմազանությունը, քան դրանց գործադրման նպատակը կամ ակնկալվող արդյունքը: Հայտնի է, որ դպրոցի կրթական խնդիրը սովորողներին գիտությունների հիմունքներով, գիտելիքներով ու հմտություններով զինելն է: Դպրոցի առաջին աստիճանը՝ տարրական դպրոցը, նախանշում է հաջորդաստիճանները: Հենց այստեղ են դրվում և՛ կրթական բովանդակության յուրացման, և՛ անձի հետագա ձևավորման հիմքերը: Այս առումով առաջին պլան են մղվում դասագրքի **զարգացնող-դաստիարակող գործառույթը** և **տեղեկատվական գործառույթը**:

Դասագրքի տեղեկատվական գործառույթը պետք է ուղղված լինի ոչ միայն և ոչ այնքան գիտելիքների, կարողությունների, հմտությունների խնդրի լուծմանը, որքան՝ էլ ավելի կարևոր կրտսեր դպրոցականի իմացական, կամային, հուզական ոլորտների զարգացմանը: Ընդ որում գիտելիքների և հմտությունների յուրացումը և ընդհանուր զարգացումը պետք է դիտարկել որպես մեկ օրգանական միասնություն: Մայրենիի բոլոր դասագրքերում առանցքային խնդիր է համարվում աշակերտների կարդալու, կարդացածն ընկալելու, իմաստավորելու և կապակցված խոսք կառուցելու կարողությունը: Սրանք ուղղված են նպաստելու աշակերտի վառ երևակայության, մտքի ճկունության, ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

https://forum.armedu.am/forum/

Մեր աշխատանքը

Չպետք է մոռանալ, որ երեխան դաստիարակվում, զարգանում է ոչ թե այն պայմանով, թե որքան գիտելիք կամ որքան բարեկրթական իմացություն ունի (ընկերասիրություն, հայրենասիրություն, մեծերի նկատմամբ հարգանք և այլնի մասին), այլ այն պայմանով, թե որքան գիտելիք կարող է ձեռք բերել նա ինքնուրույն կերպով կամ գործնականում որքանով է կիրառում իր բարեկրթական իմացությունները: Ամեն ինչ նպատակաուղղված է երեխայի ստեղծագործական երևակայության ու մտածողության, կարդալու կարողությունների, խոսքի զարգացման, ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես ու մարմնապես առողջ անձի ձևավորմանը:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն ունի զուտ գործնական ուղղվածություն, և ծրագրով նախատեսված ամբողջ լեզվական նյութը տրվում է <<գործնական հմտություններ-տեսական հիմնավորում>>շղթայով, հետաքրքրաշարժ ձևերով, բազմաբնույթ լեզվատրամաբանական առաջադրանքներով<<պարզից բարդ>>սկզբունքի կիրառմամբ: Տարաբնույթ և բազմաբովանդակ լեզվատրամաբանական առաջադրանքները հնարավորություն են տալիս շերտավորված ուսուցում կազմակերպելու համար:

Դասագրքի հեղինակները կարևորում են տեսական գիտելիքների գիտակցական յուրացումը, որը հնարավորություն է ընձեռում տեսնելու կապերը, ընդհանրացումներ անելու, զարգացնելու վերացական մտածողությունը: Գրականագիտական գիտելիքների ուսուցումը ևս իրականացվում է գործնական եղանակով՝ դասանյութերին հաջորդող հարցերին պատասխանելու և առաջադրանքների կատարման միջոցով:

Այս հարցերը նպաստում են.

ա/ սովորել <<տեսնել>> գեղարվեստական ստեղծագործությունում բառի պատկերավորությունը, արտահայտչականությունը,

բ/ չափածո ստեղծագործությունում սովորել <<տեսնել>> բանաստեղծական խոսքի երաժշտականությունը, դիտարկեն տողերն ու հանգերը,

գ/ սովորել, թե ինչ է տեքստը, որոնք են դրա կառուցվածքային-իմաստային մասերը, ինչ է ներկայացնում տեքստի վերնագիրը, որն է պատմողական և նկարագրական տեքստը:Մանկավարժական ժամանակակից մեթոդներով դասը վարելու հնարավորությունները հնարավոր են դարձնում ոչ միայն իրականացնելու դասի հիմնական նպատակները՝ կարդալու, պատմելու, խոսելու ուսուցում, լեզվական, ճանաչողական գիտելիքների ձեռքբերում, միջառարկայական, ներառարկայական կապերի ապահովում, երեխաների բազմակողմանի զարգացում, արժեհամակարգի ձևավորում, համակողմանի դաստիարակում, այլ նաև զարգացնելու մտավոր, կամային, հուզական, գեղագիտական գործունեություն և ամենակարևորը ստանալ բովանդակության նկատմամբ հետաքրքրություն և քննադատական մոտեցում:

Կրտսեր դպրոցի ուսուցիչը իր աշխատանքի հիմքում պետք է ունենա հետևյալ խնդիրները.

ա/ Երեխայի անձի ձևավորում

բ/ Ինտելեկտի, ընդհանուր կուլտուրայի, ուսումնական գործունեության ձևավորում:

գ/ Յուրաքանչյուր աշակերտի անհատական հնարավորությունների բացահայտում և այդ հիմքով շերտավորված ուսուցման կազմակերպում՝ կապված գրքով աշխատելու կարողությունների և հմտությունների հետ:

Գրքի հետ աշխատելու կարողությունների և հմտությունների ձևավորումը նպաստում է՝

- կարդալու կարողության զարգացմանը
- գեղարվեստական ստեղծագործության հուզական- գեղագիտական ընկալմանը
- խոսքի զարգացմանը
- ընթերցողական կարողությունների ձևավորմանը
- ստեղծագործական գործունեության զարգացմանը
- արժեքային համակարգի ձևավորմանը:

Երեխաների զարգացման հոգեֆիզիոլոգիական տարբերությունները թելադրում են ուսուցման շերտավորման անհրաժեշտություն: Ուսուցման շերտավորման սկզբունքը միայն կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել երեխայի անձի կայացման, նրա անհատական առանձնահատկությունների բացահայտման հարցում:
Խմբերի բաժանելը պայմանական պետք է լինի, քանի որ պետք է հաշվի առնել նաև կարողությունների դինամիկան (փոփոխել անդամներին ըստ զարգացման):
Մասնակիցները ենթակա են մշտական փոփոխման: Նպատակահարմար է խմբին տալ անուններ, որոնք ուղղակիորեն չեն կապվում շերտավորման հետ: Օրինակ՝ <<Ձնծաղիկ>>, <<Մանուշակ>>, <<Կաղնիներ>>, <<Սոսիներ>>, <<Բարդիներ>>:

Շերտավորված առաջադրանքները մայրենիի դասերին

Շերտավորված առաջադրանքները կարելի է ներկայացնել նաև անհատական քարտերի, բանավոր հարցումների միջոցով, ինչպես նաև գրատախտակի վրա՝ 2-3 տարբերակներով առաջադրանքների գրառմամբ և այլ միջոցներով:Մայրենիից շերտավորված աշխատանք կազմակերպելու համար ուսումնասիրվող տեքստի շուրջ հարկավոր է տարամակարդակ առաջադրանքներ կազմել:
Առաջին տարբերակը ամենապարզն է,երբ տրվում են առաջադրանքներ՝ դասագրքում ներկայացված ձևակերպումներով ու մակարդակների տարբերությամբ և նույն հերթականությամբ:Դասագրքերում բնագրերից հետո տրվող հարցերն ու առաջադրանքներն արդեն իսկ շերտավորված են:
Երկրորդ տարբերակը կրող է լինել յուրաքանչյուր առաջադրանքի հնարավորությունների կոնկրետացում՝ տարբեր մակարդակների պատրաստվածության աշակերտների համար:Ուսուցիչն ընտրում է այնպիսի առաջադրանքներ, որոնք նպատակաուղղվում են աշակերտների կարողությունների կատարելագործմանը, պայմաններ են ստեղծում վատ կարդացող երեխաների մոտ կարդալու որակները զարգացնելու ուղղությամբ:

Շերտավորված աշխատանքի տարբերակը հետևյալն է:

<u><<Թորգոմ նահապետի և Հայկ Նահապետի զրույցը>></u> /4-րդ դաս./
Ի մակարդակում գտնվող աշակերտներին կարելի է տալ հետևյալ առաջադրանքները.

- Կարդա՛ տեքստը:
- Ընդգծի՛ր (նշի՛ր) անհասկանալի բառերը:
- Կատարի՛ր տեքստին կից տրված առաջադրանքը:
- Առանձնացրո՛ւ գեղեցիկ բառերն ու արտահայտությունները:
- Հեղինակը <u>երկարության չափման ո՞ր միավորներն է օգտագործել խոսքում</u>
- Քարտի վրա գրված բառերից ընդգծի՛ր նրանք,որ տեքստում օգտագործված չեն

- Քարտի վրա գրված բառերից որոշի՛ր նրանք, որոնց դու հանդիպեցիր տեքստու մ: Ընդգծի՛ր դրանք:

Երկրորդ մակարդակում գտնվող աշակերտներին կարելի է առաջադրել կառուցող ական բնույթի առաջադրանքներ,որոնք նպատակաուղղված են աշակերտների ճանաչ ողական հետաքրքրությունների ձևավորմանը և հասկանալով կարդալու ու խոսքային կարողությունների կատարելագործմանը:

- Պատմվածքին համապատասխան առաջարկիր նոր վերնագիր :
- Քարտում բաց են թողնված մի քանի բառեր: Հիշի՛ր տեքստի այդ բառերը և
- լրացրո՛ւ:
- Ընդարձակի՛ր նախադասությունը (պարբերությունը) հատկանիշ ցույց տվող
- (կամ՝ ինչպիսի՞ հարցին պատասխանող) բառերով:
- Քարտի վրա գրված է մի հատված տեքստից: Փոխի՛ր շարադրման ժամանակը: Կարդա՛ տեքստը քո կատարած փոփոխություններով:
- Տեքստի երրորդ (պայմանական է) նախադասության մեջ փոխի՛ր բառը (ընտրել ամենահարմարը) իր հոմանիշներով այնպես, որ տեքստն ավելի հուզական
- դառնա:

Գրատախտակին գրված է տեքստից մի հատված: Համեմատի՛ր տեքստի

- հետ և որոշի՛ր ավելորդ նախադասությունը:
- Քարտի վրա գրված է մի հատված տեքստից, բայց բաց է թողած մի նախադասություն: Համեմատի՛ր տեքստի հետ, որոշի՛ր բաց թողած նախադասության տեղը:
- Բանաստեղծության տողերում որոշի՛ր գլխավոր իմաստն արտահայ- տող բառերը. դադա՛ր տուր և կարդա՛ արտահայտիչ:
- Ընթերցի՛ր մի հատված տեքստից և այն ավելի արտահայտիչ դարձնե- լու համար ընտրի՛ր համապատասխան շարժումներ և դիմախաղ:

Երրորդ մակարդակի աշակերտների համար ընտրվում են հետազոտական բնույթի առաջադրանքներ, որոնք նպաստում են ստեղծագործության գաղափարի գիտակցմանը և ստեղծագործական կարողությունների զարգ ացմանը::

Օրինակ՝

- Ինչու՞ է այս ստեղծագործությունը համարվում պատմվածք (բանաստեղծություն,հեքիաթ):
- Հեղինակն ի՞նչ տրամադրություն է արտահայտում պատմվածքի առաջին (երկրորդ, երրորդ...) հատվածում: Ի՞նչ միջոցներով է դա արտահայտված: Դերերով ընթերցի՛ր պատմվածքը:
- Հեղինակն ի՞նչ միջոցներով է արտահայտում իր վերաբերմունքը պատմվածքի հերոսի նկատմամբ:
- Ինչու՞ է տեքստն այսպես վերնագրված: Հիմնավորի՛ր:
- Ի՞նչ ոճով է գրված պատմվածքը՝ նկարագրակա՞ն, թե՞ պատմողական:

Ապացուցի՛ր, որ տվյալ տեքստը պատմվածք է :

Ընկերներիդ հետ կազմի՛ր այս տեքստի սցենարը:

- Ընկերներից մի խո՛ւմբ ընտրիր և բեմականացրո՛ւ կարդացածից մի հատված: Ապացուցի՛ր, ինչու՞ պետք է այդ ձևն ունենա բեմադրությունը:

Շերտավորումը կարող է իրականացվել նաև ըստ այլ հատկանիշի, օրինակ՝ ըստ ծավալի: Շերտավորման այս տեսակի հիմքում ընկած է աշակերտի՝ կարդալու տեխնիկային տիրապետելու աստիճանը:

Առաջադրանք 1:

I մակարդակ: Կարդա՛ I հատվածը, պատմի՛ր տեքստին մոտ բառերով:

II մակարդակ: Կարդա՛ և մանրամասն պատմի՛ր ամբողջ տեքստը:

III մակարդակ: Կարդա՛ ամբողջ տեքստը և համառոտ պատմի՛ր:

Առաջադրանք 2:

I մակարդակ: Կարդա՛ տեքստը, նշի՛ր առաջին պարբերության գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը:

II մակարդակ: Կարդա՛ տեքստը, նշի՛ր յուրաքանչյուր պարբերության գլխավոր միտքն արտահայտող նախադասությունը:

III մակարդակ: Կարդա՛ տեքստը, նշի՛ր այն նախադասությունը, որն արտահայտում է ստեղծագործության գլխավոր միտքը:

Առաջադրանք 3:

I մակարդակ: Տրված ասացվածքներից ընտրի՛ր նրանք, որ առավել համապատասխանեն տեքստի բովանդակությանը:

II մակարդակ: Ստեղծագործության բովանդակությանը համապատասխան ասացվածք հիշի՛ր:

III մակարդակ:Ստեղծագործությունից ընտրի՛ր այն նախադասությունը, որ նման է ասացվածքի: Այդ թեմայով ի՞նչ ասացվածքներ գիտես:

Շերտավորված ուսուցումը կարելի է իրականացնել նաև ըստ ստեղծագործական կարողությունների հատկանիշի:Ստեղծագործական բնույթի շերտավորված առաջադրանքները կարող են լինել այսպիսին.

Առաջադրանք 1: «Հայրենիք» բանաստեղծությունը/Ս. Կապուտիկյան/

I մակարդակ: Որոշի՛ր տրված բառերի խառնված հերթականությունը: Վերականգնի՛ր բառի ճիշտ պատկերը:

II մակարդակ: Հորինի՛ր պատմություն <<Հայրենիք>> թեմայով՝ տրված հենակետային բառերի օգնությամբ:

III մակարդակ: Հորինի՛ր մի քառատող հայրենիքի մասին:

Առաջադրանք 2: <<Կաքավի գովքը>> բանաստեղծությունը.

I մակարդակ: Բանաստեղծության քառատողերը վերնագրի՛ր:

II մակարդակ: Բանաստեղծության քառատողերից յուրաքանչյուրի բովանդակությանը համապատասխան նկար-պլան կազմի՛ր:

III մակարդակ: Կազմի՛ր բանաստեղծություն պլան և գրի՛ր տետրում:

Առաջադրանք 3:

I մակարդակ: <<Կաքավիգովքը>>
բանաստեղծության նկատմամբ քովերաբերմունքն արտահայտիր գույնի միջոցով:

II մակարդակ:Նկարի՛ր բանաստեղծության՝ քո կարծիքով ամենաէական դրվագը:

III մակարդակ: Նկարի՛ր՝ արտահայտելով բանաստեղծության բովանդակությունը:

Օժտված երեխաների հետ աշխատանքի առանձնահատկությունները

Ինչ պետք է գիտենա ուսուցիչը, որպեսզի պահպանի երեխայի ընդունակությունները և չվնասի նրա անձնավորության այլ կողմերի զարգացմանը:

Ամենօրյա աշխատանքների հետևում...

Օժտված երեխաների հետ աշխատանքը հատուկ մոտեցում և մանկավարժի հատուկ որակավորում է պահանջում: Այդպիսի երեխաների հետ աշխատել սովորել կարելի է, եթե որպես կարևոր խնդիր լրջորեն ընդունվի մանկավարժական գործունեության այս կերպը՝ երեխայի ունեցած ընդունակությունները պահպանել, աջակցել ու զարգացնել և դրա հետ նրա անձնավորության այլ կողմերի, օրինակ՝ հուզական ոլորտի զարգացմանը չվնասել:

Իմիջայլոց խնդիրը կիսով չափ լուծվում է, եթե ուսուցիչը կարողացել է տեսնել երեխայի շնորհքը, այսինքն՝ հասկացել և ըստ արժանվույն գնահատել է նրա առանձնահատկությունները: Ցավոք, միշտ այդպես չի լինում: Առօրյա գործերով տարվելով՝ ուսուցիչը կարող է չնկատել երեխայի օժտվածությունը: Կամ ավելի վատ՝ ուշադրություն դարձնել միայն անհաջողություններին: Օրինակ՝ միշտ բարկանալ վատ ձեռագրի կամ տետրը թափթփված լրացնելու համար: Այդ դեպքում երեխան, որին կանոնավոր կերպով դժգոհությամբ ցույց են տալիս երկրորդական վրիպումները, հարմարվում է այն մտքին, որ իր շնորհքը, իր հատուկ ընդունակությունները, որոնցով պարգևատրել է ճակատագիրը, նշանակություն չունեն, և չեն գնահատվում շրջապատում: Բայց չէ՞ որ մարդու համար շատ կարևոր է իր տաղանդի ընդունումը: Առավել ևս՝ մանկության տարիներին:
Հանճարեղ մարդկանց կենսագրությունը ուսումնասիրելով՝ շատ հեշտ կարելի է համոզվել: Որպես կանոն՝ յուրաքանչյուրի կյանքում եղել է ինչ-որ մեկը, որը տեսել է ապագա հանճարի երևելի ընդունակությունները և հավատացել է:

Տաղանդը միայն ազատության մեջ է ծաղկում:

Իսկ ինչպե՞ս պայմաններ ստեղծենք ընդունակության զարգացման, օժտված երեխայի՝ կայացած ստեղծական ճակատագրով մարդ «դառնալու» համար: Ոչինչ այնպես չի սպանում ընդունակությունը, ինչպես ստանդարտ, անկյանք, միջինացված մոտեցումը, անպտուղ առաջադրանքները, անվերջ ընդհանուր աշխատանքը: Օժտվածությունը նեղ, խստորեն սահմանված շրջանակներում չի զարգանում: Որպեսզի ընդունակությունները զարգանան պետք է մշտապես մարզել, անհատական աճի համար տարածություն է անհրաժեշտ: Երեխան պետք է սովորի դժվարություններ հաղթահարել, խիզախել, նպատակին հասնելու համար համառություն ցուցաբերել, պատասխանատվություն կրել: Այս կարևոր անձնային որակների զարգացմանը նպաստում է մշտապես խնդրահարույց իրավիճակների հաղթահարումը հայտնաբերման և ստեղծագործելու ուրախություն զգալու հնարավորության հետ: Շատ արդյունավետ է, օրինակ, աշխատանքը փոփոխվող կազմով փոքր խմբերում, որտեղ երեխան զրուցընկեր, ընդդիմախոս, նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, սովորում է իր ինքնատիպ գաղափարները մատչելի արտահայտել և դրանք ընկերների կարծիքի հետ համադրել:
Ի վերջո, խմբային աշխատանքն ուսուցչին ավելի շատ հնարավորություն է տալիս

տարբեր բարդության առաջադրանքներ կիրառելու: Հասկանալի է, որ դա դասին պատրաստվելու ավելի շատ ժամանակի ծախս է պահանջում: Այդ ծախսերն անխուսափելի են օժտված երեխաների հետ լրջորեն աշխատելու պատրաստ ուսուցչի համար: Չէ՞ որ զարգացման համար այդպիսի երեխաներին անհրաժեշտ է որակապես այլ մակարդակի ուսումնական նյութեր ուսումնասիրել:

Դասերի ժամանակ շփման բարձր մակարդակ պետք է ապահովել, օգտագործել մինչառարկայական կապեր, շրջապատող իրականությունն ուսումնասիրելու նկատմամբ համակարգված մոտեցում: Չէ՞ որ խնդրի մեկնաբանման ժամանակ օժտված երեխաները ոչ ստանդարտ մոտեցումներ են ցուցաբերում, երևույթների և գործընթացների ինքնատիպ, ավելի լայն դիտարկում: Օժտված երեխաները հարցերի պատասխանները ինքնուրույն փնտրելու կարիք ունեն, որի արդյունքում նրանք բացահայտում են ոչ ակնհայտ կապերը և գտնում են ինքնատիպ լուծումներ:

Ռիսկեր

Հաճախ դպրոցական կյանքում օժտված երեխաներին ուղեկցում են փոխհարաբերությունների դժվարությունները: Շատ բան կախված է նրանից, թե ուսուցիչները ինչպես կվերաբերվեն բոլոր մյուսներից շատ հստակ առանձնացվող երեխային: Դա պրոֆեսիոնալիզմի ցուցանիշներից մեկը կարելի է համարել. լավ ուսուցիչն ընդունակ աշակերտին ոչ միայն լրացուցիչ աշխատանքի աղբյուր, այլ նաև սեփական զարգացման հնարավորություն է համարում:

Մոսկվա՝ վերապատրաստման դասընթացների եկած մի դասվար պատմում էր, թե ինչպես իր դասարան էր ընկել մի երեխա, որն «ամեն ինչ գիտեր», այդ թվում՝ այնպիսի մի ժողովրդի հնագույն էպոս, որի մասին ուսուցչուհին նրանից էր լսել:

Պատկերացնելով, ինչպես պետք է ինքը տարրական դպրոցի ծրագրով ուսուցանի այդ քայլող հանրագիտարանին, ուսուչուհին սարսափում էր: Սակայն երբ դասարանը պատրաստվում էր զբոսանքի, նա տեսավ, որ այդ երեխան կոշիկի քուղերը չի կարողանում կապել: «Եվ թեթևացած հասկացա, որ նրան սովորեցնելու բան ունեմ»,- ժպտալով ավարտեց նա: Դա, իհարկե, չի նշանակում, թե ուսուցչուհին պատրաստվում է նրան միայն կապիչները կապել սովորեցնել: Պարզապես զգացել է, որ չնայած գլխում տեղեկատվության մեծ ծավալին՝ իր կողքին մանչուկ է, որին ինքը կարող է օգնել ընդունակությունները զարգացնելու:

Ի դեպ, պետք է խոստովանել, որ օժտված երեխաներն ուսուցիչների համար նաև միանգամայն իրական ամենօրյա դժվարություններ են առաջացնում են: Օրինակ՝ նրանք հաճախ խախտում են դասարանի կարգապահությունը. ձանձրանում են մտավոր թերբեռնվածության պատճառով: Առաջադրանքը վայրկենապես կատարելով՝ տեղում անհանգիստ շարժվում են, պառկում նստարանին՝ շեղելով մյուսների ուշադրությունը: Կամ էլ առաջադրանքը կատարում են նստարանի տակ սողալու կամ այլ անկարգության ընթացքում, քանի որ կարող են մի քանի գործ միաժամանակ անել: Միակ փրկությունը երեխային հետաքրքիր առաջադրանքներով ծանրաբեռնելն է:

Ընդ որում առաջադրանքները պետք է ապահովվեն զարգացումը ոչ միայն այն ուղղությամբ, որը երեխային հատկապես հաջողվում է: Օժտված երեխաների ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ նրանց ունակությունները սկսում են

շահագործել՝ հանուն օլիմպիադաներում և մրցումներում հաղթանակի խրախուսելով միակողմանի զբաղմունքն ու վարժանքը: Իսկ թույլ կողմերը այդպես էլ կարող են առանց որևէ ուշադրության և զարգացման մնալ: Օրինակ՝ կարող է կաղել բնական կամ ճշգրիտ գիտությունների ոլորտում օժտված երեխաների լեզվական արտահայտչամիջոցների զարգացումը, որն ուղղակի չի հասցնում նրանց մտավոր բուռն աճի հետևից: Այդ դեպքում ևս շատ օգտակար են խմբային քննարկումները, որոնց ժամանակ երեխայի մեջ շահագրգռություն է առաջանում իր մտքերն արտահայտելու այնպես, որ իրեն հասկանան: Եվ ուսուցիչը համբերատարություն պետք է դրսևորի, օգնի նրան ձևակերպելու մտքերը, և ոչ թե ընդհատի սովորական «Նստիր, մտածիր» արտահայտությամբ: Եթե օժտված երեխան դժվարությամբ է արտահայտում մտքերը, կարելի է խմբի բոլոր անդամներին առաջարկել նախ գրի առնել առաջացած գաղափարները: Դա ավելի շատ ժամանակ և ձևակերպման վրա կենտրոնանալու հնարավորություն կտա:

Օժտված երեխային սպառնացող մեկ այլ վտանգ է անհատական զարգացման խեղաթյուրումը: Բոլորին հայտնի են դեպքեր, երբ ամբողջ ընտանիքը համառորեն և հափշտակությամբ փառաբանում է երեխայի տաղանդը, նրան երես տալիս ու փափկակեցության սովորեցնում:

Գործնականում ծնված օրվանից իր մասին լսելով հիացմունքի այդ չափազանցված խոսքերը՝ երեխան սկսում է նկատմամբ բացառիկ վերաբերմունք ակնկալել և իրեն շրջապատողներիհետ համապատասխան ձևով վարվել: Դա ամեն դեպքում երեխայի համար կարող է հիվանդագին հետևանքներ ունենալ: Եվ հատկապես, եթե զարգացման մեջ առաջ անցնելը ժամանակավոր բնույթ է ունեցել. ուսման առաջին տարիներին եղել է աստղ, իսկ որոշ ժամանակ անց հասակակիցիները սկսել են առաջ անցնել: Եվ վերջ, երեխան դա ընդունում է այդ որպես իր ճակատագրի ձախողում:

Ի դեպ, ծնողների չափազանցված ակնկալիքները ստեղծագործական զարգացման համար լուրջ արգելք կարող են դառնալ: Նրանք իրենց սեփական չիրականացած հավակնություններն ու գերազանցված սպասելիքները բարձում են երեխաներին, նրանց չեն սովորեցնում պարտվել: Այդ պատճառով ամեն մի վրիպում թվում է անուղղելի, իսկ հնարավոր անհաջողության սարսափը կաթվածահար է անում իրադարձությունների զարգացումը: Լավ կլինի, որ ուսուցիչը հաճախակի և հետևողականորեն հիշեցնի ծնողներին այդ մասին:

Եվ ընհանրապես օժտված երեխային շրջապատող բոլոր մեծահասակներին էլ չէր խանգարի հիշել, որ իրենց առջև նախ և առաջ երեխա է, որին անհրաժեշտ է խաղալ, նկարել, պարել, վազվզել: Իսկ եթե հանուն սեփական հեղինակության միայն շահագործենք նրա ընդունակությունները, չապրած մանկությունը հետագայում շատ հիվանդագին կարող է անդրադառնալ նրա կյանքին, ով ինչ-որ ժամանակ եղել է օժտված երեխա:

https://multiurok.ru/files/ozhtvats-erekhaneri-het-ashkhatank-i-arhandznahatk.html

Եզրահանգումներ

Այսպիսով, մայրենիի ուսուցումը նպատակաուղղված է երեխայի ստեղծագործական երևակայության,մտածողության,կարդալու կարողությունների, խոսքի զարգացման, ինքնուրույն, ինքնավստահ, հոգեպես և մարմնապես առողջ մարդու ձևավորմանը:

Գրականագիտական գիտելիքների ուսուցումն իրականացվում է գործնական եղանակով. Տեսնել գեղարվեստական ստեղծագործությունն ու բառի պատկերավորությունը, տեսնել բանաստեղծական խոսքի երաժշտականությունը, մտորումներ տեքստի վերնագրի շուրջ:Ժամանակակից մեթոդներով դաս վարելու հնարավորությունները զարգացնում են երեխաների մտավոր, կամային, հուզական, գեղագիտական գործունեությունը, բովանդակության նկատմամբ հետաքրքրությունը և քննադատական մոտեցումը:

Երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման տարբերությունը ենթադրում է շերտավորված աշխատանք: Սա կարող է նպաստել երեխայի անձի կայացմանը, բացահայտել անհատական առանձնահատկությունները: Խմբերի բաժանելը պայմանական պետք է լինի: Հաշվի առնելով զարգացման դինամիկան՝ փոփոխել անդամներին ըստ զարգացման: Այսպիսով, մասնակիցները ենթակա են մշտական փոփոխման: Այս աշխատանքը հնարավորություն է տալիս ապահովել երեխայի զարգացման դինամիկան և աստիճանաբար փոփոխել խմբի անդամներին ըստ զարգացման:

Մայրենիի ուսուցման բոլոր փուլերում պետք է կարևորել ստեղծագործական բնույթի աշխատանքները, որոնք առավել բնորոշ են օժտված երեխաներին:

Օժտված երեխայի հայտնվելը դասարանում առաջացնում է լրացուցիչ խնդիրներ: Այն ուսուցչից հատուկ մոտեցում է պահանջում, այն է պահպանել, զարգացնել երեխայի հատուկ ընդունակությունները՝ չվնասելով հուզական ոլորտի զարգացմանը:

Նախ պետք է տեսնել երեխայի օժտվածությունը, ապա անհրաժեշտ է հատուկ պայմաններ ստեղծել զարգացման համար, քանզի օժտվածությունը նեղ սահմաններում չի զարգանում:

Երեխան պետք է սովորի դժվարությունները հաղթահարել, խիզախել, նպատակին հասնելու համար համառություն ցուցաբերել:

Կարևորվում է փոքր խմբերով աշխատանքը, որտեղ օժտված երեխան նման հետաքրքրություններով ընկեր է գտնում, իր գաղափարները համադրում ընկերների կարծիքների հետ:

Տվյալ երեխաները ցուցաբերում են ոչ ստանդարտ մոտեցումներ, գտնում են ինքնատիպ լուծումներ, ուստի դասերի ժամանակ պետք է ապահովել շփման բարձր մակարդակ: Այս երեխաներին չպետք է ծանրաբեռնել օլիմպիադաներում, մրցույթներում:

Սպառնացող վտանգ է ծնողների կողմից նրա տաղանդի փառաբանումը, քանի որ մի փոքր անհաջողությունը նրա կողմից կարող է դիտվել ճակատագրի ձախողում:

Օժտված երեխան ոչ թե նվեր է ուսուցչին, այլ առաջադրում է լրացուցիչ խնդիրներ:

Օգտագործված գրականություն

1. http://lib.armedu.am Գայանե Դանիելյան

2. Լուսինե Հակոբյան

3. Հայ կրթական միջավայր, Նարինե Դիլլաքյան

4.« Օժտվածության երևույթի փորձարարական հետազոտություն»Նելլի Բրուտյան